ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/159

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանի (լիազորագիր՝ տրված 21.06.2021թ.),

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության լիազորված ներկայացուցիչներ Հ. Անտոնյանի և Դ. Արզումանյանի (լիազորագրեր՝ տրված 21.06.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.06.2021թ. թիվ 26/26-1/9745-2021 գրությամբ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 09.06.2021թ. թիվ 02/07.3/2969-2021 գրության հիման վրա 16.06.2021թ. թիվ 26/26-1/9745-2021 գրությամբ նախաձեռնել է «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Էական նշանակություն ունեցող հանգամանքներ, հիմքեր և հիմնավորումներ.

1. Պատվիրատուի և Մասնակցի միջև 21.02.2021 թվականին կնքվել է թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/22 պայմանագիրը /այսուհետ Պայմանագիր/:

2.Պատվիրատուն 31.05.2021 թվականի գրությամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը:

3. Պատվիրատուն վերոնշյալ գրությամբ որպես Պայմանագրի միակողմանի լուծման հիմք վկայակոչել է այն, որ Կատարողի կողմից չեն մատուցվել թիվ 21-2, 21-5, 21-7, 21-14 հայտերով /այսուհետ՝ Հայտեր/ ներկայացված ծառայությունները:

4. 11.06.2021 թվականի գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագիրը լուծվել է հայտերով չմատուցված ծառայությունների հիման վրա:

5. Կատարողի կողմից մատուցվել են Հայտերով ներկայացված ծառայությունները:

6. Հայտերով ներկայացված ծառայությունների մատուցման վերաբերյալ առկա են Պատվիրատուի վարորդների կողմից ստորագրված հանձման-ընդունման ակտեր:

7. Պատվիրատուի կողմից որևէ ձևով չեն ներկայացվել առարկություններ Հայտերում ներկայացված և Կատարողի կողմից արդեն իսկ մատուցված որակի վերաբերյալ:

Տվյալ դեպքում Պատվիրատուն Պայմանագրի միակողմանի լուծման հիմքում դրել է թիվ 21-2, 21-5, 21-7, 21-14 հայտերով ներկայացված 267VV01, 262VV01, 287VV01, 005VV01 պետհամարանիշներով տրանսպորտային միջոցներին վերաբերող ծառայությունների /այսուհետ՝ Ծառայություններ/ չմատուցման փաստը:

Նշենք, որ Ծառայությունները Կատարողի կողմից մատուցվել են, ինչը հավաստվում է նախ 267VV01, 262VV01, 005VV01, 287VV01 պետհամարանիշներով տրանսպորտային միջոցներին վերաբերող մատուցված ծառայությունների Պատվիրատուի վարորդների կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտերով, ինչպես նաև վարորդների կողմից տրված տեղեկանքներով և արձանագրություններով:

Բացի այդ, հաշվի առնելով Կողմերի միջև ձևավորված աշխատելաոճը, Ծառայությունների մատուցման ավարտից հետո Կատարողի կողմից Պատվիրատուին թղթային տարբերակով ներկայացվել են հանձման-ընդունման արձանագրություններ՝ հաստատման համար:

Ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունների վերաբերյալ, մատուցված Ծառայությունների վերաբերյալ Պատվիրատուն որևէ առարկություն մինչ օրս չի ներկայացրել:

Մատուցված Ծառայությունների վերաբերյալ Կատարողի կողմից դուրս են գրվել նաև հարկային հաշիվներ:

ՀՀ ֆինանսների նախարարի N 600-Ն որոշման 17-րդ կետի համաձայն.

«17. Բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Անձը կարող է նշանակել փորձաքննություն կամ դիմել տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմիններին' դիրքորոշում ստանալու համար: Փորձագիտական եզրակացությունը և կամ պետական մարմնի դիրքորոշումը չընդունելու դեպքում Անձը բողոքի վերաբերյալ կայացվող որոշման մեջ պատճառաբանում է այդ հանգամանքը»:

Որպես մեր կողմից վկայակոչված փաստի ապացույց կարող է հանդիսանալ նաև ավտոտեխնիկական փորձաքննության նշանակումը, որպիսի պայմաններում կհետազոտվեն 267VV01, 262VV01, 287VV01, 005VV01 պետհամարանիշներով տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը, ինչի արդյունքում կհաստատվի, որ Հայտերում ներկայացված Ծառայությունները մատուցվել են և մատուցվել են պատշաճ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Գնումների հետ կապված բողոքներ անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:»

Նույն օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«5. Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները»:

Այսինքն, նշված դեպքով անհրաժեշտ է պարզել հետևյալը.

- Կատարողի կողմից Հայտերում ներկայացված Ծառայություններն առհասարակ և փաստացի մատուցվել են թե՞ ոչ, քանի որ Պայմանագրի միակողմանի լուծման հիմք է Հայտերում ներկայացված Ծառայությունների չմատուցումը:
- Համապատասխանաբար, Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծումն իրավաչափ է եղել, թե՞ ոչ:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ, գտնում ենք, որ առկա չէ Պատվիրատուի կողմից վկայակոչված, այն է՝ Հայտերով ներկայացված ծառայությունների չմատուցման հիմքը, համապատասխանաբար, Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ է, Կատարողի կողմից Հայտերում ներկայացված Ծառայությունները մատուցվել են, ուստի և, խնդրում ենք, նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/159 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.06.2021թ. թիվ 02/07.3/2969-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի միջև 22.02.2021թ-ին կնքված թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/22 ծածկագրով

պայմանագրի շրջանակներում «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն չի կատարել ստանձնած պարտավորությունները: Մասնավորապես, Նախարարության կողմից 04.03.2021թ. թիվ 21-2, 10.03.2021թ. թիվ 21-5, 16.03.2021թ. թիվ 21-7 և 30.03.2021թ. թիվ 21-14 հայտերով ներկայացված ծառայությունները չեն մատուցվել: Նախարարությունը գրությամբ ծանուցել է «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին, որին ի պատասխան «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն ներկայացրել է պարզաբանում, որը փաստաթղթերով չի հիմնավորել և հայտերով ներկայացված ծառայությունները հետագայում ևս չի մատուցել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ Նախարարությունը 31.05.2021թ. թիվ 02/07.3/2342-2021 գրությամբ միակողմանի լուծել է թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/22 Պայմանագիրը:

Ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» պարբերությունը Ձեզ եմ ներկայացնում Պայմանագրի լուծման տեղեկատվությունը համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/159 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/159 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/159 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի միջև 22.02.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/22» ծածկագրով ամենագնաց և թեթև բեռնատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ամենագնաց և թեթև բեռնատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1

Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցի պահանջների:

2. Տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 31.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

3. Պատվիատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 09.06.2021թ.՝ թիվ 02/07.3/2969-2021 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.06.2021թ. թիվ 26/26-1/9745-2021 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 09.06.2021թ. թիվ 02/07.3/2969-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ի միջև 22.02.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/22» ծածկագրով ամենագնաց և թեթև բեռնատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ամենագնաց և թեթև բեռնատար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցի պահանջների:

Տեղեկագրում ***<u>31.05.2021թ.</u> հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը***:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է <u>09.06.2021թ.՝ թիվ 02/07.3/2969-2021</u> գրությամբ:

Այսպիսով՝ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմի պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 7-րդ կետի 7.9-րդ ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը շարադրված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով ***<u>Տեղեկագրում 31.05.2021թ. հրապարակված Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը</u>***՝ արձանագրում եմ, որ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ

են եկել ***01.06.2021թ***., սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին ***09.06.2021թ.,*** որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել նաև հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում, համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում

գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում, օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն որոշման շրջանակներում Ընկերության ներկայացված դիրքորոշմանն անդրադարձ չի կատարվում այն հիմնավորմամբ, որ որոշումը կայացվել է այն հիմքով, որ Պատվիրատուի կողմից Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկվել է լիազորված մարմնին Կարգի 45-րդ կետի խախտմամբ:

Հետևաբար գտնում եմ, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը, և նման պայմաններում միայն քննության առարկա կարող է դառնալ Ընկերության կողմից հնարավոր թույլ տված խախտումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.06.2021թ. թիվ 26/26-1/9745-2021 գրությամբ «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**